ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 24 -Ա

« 05 » ՓԵՏՐՎԱՐԻ 2025Թ.

ՀԱՅԱՐՓԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39–րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 14-ին կայացած նիստի թիվ 171 արձանագրությունն և Հայարփի Մարգարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայարփի Մարգարյանին նշանակել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Աշխատանքը սկսել 2025 թվականի փետրվարի 6-ից:
2. 2025 թվականի փետրվարի 6-ից Հայարփի Մարգարյանին ազատել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի փետրվարի 6-ից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր